Հետազոտական աշխատանք

Տիտղոսաթերթ

Կազմակերպության տվյալներ • Անվանում, հասցե • Տնօրեն • Էլ.հասցե • Հեռախոս	«Մասնակցային դպրոց» կրթական հիմնադրամ Վահրամ Սողոմոնյան masnakcayindproc@gmail.com
Հետազոտության թեմա/վերնագիր • Հետազոտության թեմա	Համագործակցային ուսուցման մեթոդներն անգլերենի ուսուցման ժամերին
Ուսուցչի տվյալներ • Ա.Ա.Հ. • Մասնագիտություն • Հեռախոս • Էլ. հասցե • Դասավանդվող առարկաներ • Դասարաններ	Անահիտ Լալայան Գևորգի Ուսուցչուհի Անգլերեն 3, 4, 5, 6, 7, 8, 9
Ուսումնական հաստատության տվյալներ • Անվանումը, հասցե • Հեռախոս • Էլ. հասցե (տնօրենության) • Web կայքի հասցե	Նոր Հաճնի N1 հիմնական դպրոց Կոտայքի մարզ ք. Նոր Հաճն 022442758 norhajen1@schools.am norhachn1.schoolsite.am

Բովանդակություն (1 էջ)

Ներածություն……..…2-4
Գրականության ակնարկ……..……6-9
Համագործակցային ուսուցման կազմակերպումը……..…9-12
Համագործակցային ուսուցման մեթոդներն անգլերենի դասավանդման
ժամերին……..12-17
Եզրակացություն……..……..18-19
Առաջարկություններ……..…19-20
Գրականության ցանկ……...20-21
Հավելված ……...21

Ներածություն (1-ից 2 էջ)

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Համագործակցային ուսուցումը լայն տարածում է գտել աշխարհում: Այն ավելի ու ավելի է կիրառվում՝ որպես աշխատանքային, դասավանդման եւ ուսուցման նոր մոտեցում եւ ռազմավարություն: Համագործակցային ուսուցումը խմբային աշխատանքի առավել բարձր աստիճանն է, որը ենթադրում է խմբային աշխատանքի որոշակի նոր մշակույթի ձեւավորում: Այն ընձեռում է հնարավորություններ բազմաբնույթ կրթական նպատակներին հասնալու համար, ինչպիսիք են ակադեմիական հասկացությունների, սկզբունքների եւ իրադարձությունների ընկալումը,

միջանձնային հմտությունների զարգացումը եւ այլն: Ժամանակակից ուսուցման պրակտիկայի լավագույն օրինակը փոքր խմբային աշխատանքն է: Փոքր խմբային աշխատանքը երբեմն պայմանականորեն անվանում են համագործակցային ուսուցում, համատեղ գործունեության վրա հիմնված ուսուցում կամ սոցիալական ուսուցում: Գոյություն ունեն համագործակցային ուսուցման տարբեր մեթոդներ, որոնք կիրառվում են դասի տարբեր փուլերում: Այդ ընթացքում աշակերտները ներքաշվում են մի գործընթացի մեջ, որտեղ նրանք կիսվում են գաղափարներով, փոխանակում են տեղեկատվություն, կատարում են ընտրություն եւ կայացնում են որոշումներ: Դրանք են Աշակերտների թիմային առաջադիմություն, Խճանկար, Շրջվիր դեպի զույգդ, Պրիզմա, Խմբային հետազոտություն, Շրջագայություն պատկերասրահում եւ այլն:

Աշխարհը փոխվում է արագընթաց տեմպերով եւ անկանխատեսելիորեն: Տեղեկատվությունն ու գիտելիքները ձեւավորում են մեր աշխարհայացքը: Հասարակական բոլոր փոփոխությունները անդրադառնում են նաեւ կրթական համակարգին:

Հայաստանում, ինչպես եւ ամբողջ աշխարհում ակնհայտ է, որ մարդիկ կարիք ունեն աշխատելու խմբերով:

Արագընթաց փոփոխությունները մարդուց պահանջում են նոր իրավիճակներին հարմարվելու, ճկուն գործելու հմտություններ: Հասարակաությունը դպրոցին եւ հատկապես ուսուցչին է լիազորել իր ապագայի կերտումը: Այս աշխատանքում ցանկանում ենք անդրադառնալ համագործակցային մեթոդների, հնարների, փոքր աշխատանքային խմբերի արդյունավետ կիրառելիությանը: Համագործակցային մեթոդների կիրառումն ինքնանպատակ չէ. դրանք պետք է ուղղված լինեն սովորողների ինչպես մտավոր ու զգայական կարողությունների, այնպես էլ ինքնուրունության, սոցիալականացման եւ այլ հմտությունների զարգացմանը: Կարեւորագույն խնդիր է դառնում ոչ միայն այդ հմտություններին տիրապետելը, ալեւ արժեւորելը եւ կյանքում դրանք համապատասխան իրավիճակներում կիրառելը: Ուստի մեր խնդիրն է անգլերենի դասաժամերին համագործակցային ուսուցման շնորհիվ

աշակերտների մոտ ձեւավորել այնպիսի որակներ, զարգացնել այնպիսի հմտություններ, որոնք համահունչ կլինեն կրթության ժամանակակից պահանջներին, իսկ շրջանավարտը՝ կրթական հաստատությունում ձեռք բերածը կկարողանա կիրառել կյանքում:

Ուսուցիչը միանգամից, մի դասի ժամանակ չի կարող օգտագործել մեթոդների հարուստ զինանոցը: Նա պետք է որոշակի դասի համար կատարի ուսուցման մեթոդի, հնարի ընտրություն: Ուսուցման մեթոդի հիմքում ընկած են այն խնդիրները, որոնք լուծվում են դասի ժամանակ կամ դասի որոշակի փուլում. բացի դասի նպատակից ու խնդիրներից, մեթոդների ընտրությունը կախված է նաեւ՝ դասի տիպից ու կառուցվածքից, ուսումնական նյութի բովանդակությունից, աշակերտների տարիքից, դասարանում աշակերտների թվաքանակից, պատրաստվածության մակարդակից, շահագրգռվածությունից ու հետաքրքրությունից, ուսումնադիտողական պարագաների առկայությունից, ժամաքանակից, ուսուցչի պատրաստվածության մակարդակից եւ այլ գործոններից:

Համագործակցային ուսուցման տարրերի կիրառումը նպաստում է դասարանում նոր՝ համագործակցային միջավայրի ձեւավորմանը, օգնում է ուսուցչին հասկանալու համագործակցային ուսուցման էությունն ու պլանավորելու դասը, պայմաններ է ստեղծում ուսուցման արդյունավետության գնահատման, արժեւորման համար, ինչպես նաեւ բարելավում է խմբային աշխատանքը:

Աշխատանքը **նպատակ** է հետապնդում նպաստել կրթության որակի, սովորողների ակտիվության բարձրացմանը, միջանձնային հարաբերությունների մշակույթի ձեւավորմանը, ուսուցման գործընթացն ակտիվ ու հետաքրքիր դարձնելուն, համագործակցային խմբերով աշխատելուն: Քննարկված են համագործակցային մի քանի մեթոդներ:

Հետազոտության **խնդիրը**: Մատնանշել սովորողի համագործակցային կարողությունների ձեւավորման ու զարգացման ուղիները անգլերենի

դասաժամերին՝ հատկապես մատնանշելով խճանկար և շրջագայություն պատկերասրահում մեթոդները:

Հետազոտական աշխատանքը միտված է պատասխանելու այն **հարցին**, թե համագործակցային որ մեթոդներն են առավել բարձրացնում անգլերենի դասավանդման արդյունավետությունը 7-րդ դասարանում:

Նպատակը եւ հետազոտական հարցը	1. Նպաստել կրթության որակի բարձրացմանը: 2. Նպաստել սովորողների ակտիվության բարձրացմանը: 3. Նպաստել միջանձնային հարաբերությունների մշակույթի ձեւավորմանը: 4. Ուսուցման գործընթացը դարձնել ակտիվ ու հետաքրքիր: 5. Նպաստել համագործակցային խմբերով աշխատելուն: Համագործակցային որ մեթոդներն են առավել բարձրացնում անգլերենի դասավանդման արդյունավետությունը 7-րդ դասարանում:
Թեմայի կարեւորությունը եւ նշանակությունը Ձեր/թիրախային խմբի համար	Համագործակցային ուսուցման տարրերի կիրառումը կարևոր է դասարանում նոր՝ համագործակցային միջավայրի ձեւավորման համար, պայմաններ է ստեղծում ուսուցման արդյունավետության գնահատման, արժեւորման համար, ինչպես նաեւ բարելավում է խմբային աշխատանքը:
Ո՞ր առանցքային կոմպետենցիային/կարողունակությանն է	Նպատակի ուսումնասիրությունը ուղղված է ինքնաճանաչողական և սոցիալական կարողունակությանը

ուղղված նպատակի ուսումնասիրությունը	
Վերապատրաստման ո՞ր թեմայի շրջանակում է անդրադարձ կատարվել այս հիմնախնդրին/ոլորտին	Օրենսդրություն

Պարագրաֆներ/մասեր

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱԿՆԱՐԿ

Համագործակցային մեթոդները մեծ ներուժ ունեն աշակերտակենտրոն ուսուցում կազմակերպելու համար: Նշենք նաեւ,որ ժամանակակից կրթական գործընթացում կարեւորվում է ոչ թե պատրաստի գիտելիքի մատուցումն ուսուցչի կողմից, այլ աշակերտին մասնակից դարձնելը այդ գիտելիքի ձեռքբերմանը:

Համագործակցային մեթոդները թույլ են տալիս առավել արդյունավետ յուրացնել նոր նյութը, զարգացնել ինքնուրույնության, համագործակցային, հետազոտական աշխատանք կատարելու բազում հմտություններ, օրինակ՝ տեղեկույթի որոնման, հավաքման, մշակման եւ այլն: Սակայն այդ հմտությունների ձեռքբերումը սովորողների կողմից երկարատեւ աշխատանքի արդյունք է, իսկ ուսուցչին հնարավորություն է տալիս կատարելագործել, հարստացնել իր մեթոդական մոտեցումները տարբեր խնդիրների լուծման ժամանակ:

Այսօր մանկավարժների մեթոդական զինանոցը բավականին հարուստ է, սակայն բոլորովին այլ է դրանց կիրառությունը: Որպես անգլերենի ուսուցչուհի՝ հաճախակի եմ մշտադիտարկում կատարում տարբեր դասարաններում:

Դասալսումների ժամանակ ուսուցիչների կողմից կիրառվում են բազում մեթոդներ, սակայն դրանք գրեթե միշտ կա՛մ չեն հասնում տրամաբանական ավարտին՝ դասի նպատակին, կա՛մ էլ ժամանակի մեջ չեն տեղավորվում, խմբերը համասեռ չեն կազմվում, խմբերում թիմային աշխատանքը չի ստացվում, ոչ բոլորն են ակտիվություն ցուցաբերում, անհրաժեշտ պահանջները կա՛մ չեն հասկանում, կա՛մ էլ թերի են կատարում:

Ցանկացած նոր աշխատանք կատարելիս կարող են բացահայտվել բազում թերություններ, որոնք շտկվում, ճշգրտվում են աշխատանքի բազմակի կրկնության արդյունքում:

Գոյություն ունեն համագործակցային ուսուցման տարբեր մեթոդներ, որոնք ունեն ինչպես նմանություններ, այնպես էլ տարբերություններ: Ստորև ներկայացնենք համագործակցային ուսուցման մի շարք մեթոդներ: Դրանք են՝ աշակերտների թիմային առաջադիմություն, խճանկար, շրջագայություն պատկերասրահում, երեք բանալի և մեկ կողպեք, հինգրոպեանոց ազատ շարադրանք, շրջվիր դեպի զույգդ և այլն:

- Աշակերտների թիմային առաջադիմության մեթոդ:

Համագործակցային ուսուցման այս մեթոդը մշակվել է Ջոն Հոփկինսի համալսարանի պրոֆեսոր Ռոբերտ Սլավինի կողմից: Այս մեթոդը խթանում է աշակերտների ուսումնառությունը: Այստեղ էական է այն հանգամանքը, որ գնահատվում է աշակերտների առաջընթացը: Այս մեթոդը լուրջ խթան է ցածր առաջադիմությամբ աշակերտների համար, քանի որ նույնիսկ չնչին առաջընթացի պարագայում նրանք կարող են ներդրում ունենալ թիմի արդյունքում: Իսկ միջին ու բարձր առաջադիմությամբ աշակերտները պետք է մի կողմից՝ օգնեն իրենց դասընկերներին, մյուս կողմից՝ կարողանան պահպանել ու բարելավել իրենց նախորդ ցուցանիշները: Այս մեթոդի առավելություններից մեկն էլ այն է, որ հնարավորություն է տրվում գնահատելու և՛ առանձին աշակերտների, և՛ խմբերին:

- Խճանկար (Ջիգսո, Jigsaw): Խճանկարը համագործակցային ուսուցման մեթոդ է:

Այն մշակվել և փորձարկվել է Տեխասի համալսարանում՝ Էլիոթ Արոնսոնի և նրա գործընկերների կողմից, այնուհետև լրամշակվել է Սլավինի և վերջինիս գործընկերների կողմից: Խճանկարը դասարանում կարող է կիրառվել տարբեր ձևերով: Ներկայացնենք դրանցից մեկը: Աշակերտներին կարելի է բաժանել չորս կամ հինգ անդամ ունեցող տարասեռ խմբերի: Յուրաքանչյուր խմբին տալ դասի մեկ հատված և աշխատելու համար որոշակի ժամանակ: Այն լրանալուց հետո խմբերը ներկայացնում են իրենց հատվածը՝ կարդում են, բառերը բացատրում, դուրս գրում ուղղագրական արժեք ներկայացնող բառեր, դրանցով կազմում նախադասություններ, կատարում լեզվական աշխատանքներ և այլն:

Յուրաքանչյուր խումբ սովորում է դասի մեկ հատվածը, բայց արդյունքում սովորում են ամբողջ դասը՝ դադարեցնելով աշխատանքը և ուշադիր լսելով բոլոր խմբերի պատասխանները: Կարող է ունենալ նաև փորձագետների խումբ՝ «Ջիգսո 2», որի փուլերն են

- նյութի ուսումնասիրություն և տեղեկատվության հավաքում,
- աշխատանք փորձագիտական խմբում,
- աշխատանք ուսումնական խմբում,
- ավարտական աշխատանք,
- ամփոփում:
- Շրջագայություն պատկերասրահում:

Սա «Խճանկար» մեթոդի տարատեսակ է, որի նպատակն է փոխանակել տեղեկություններ, մշակել գաղափարներ և կատարել անդրադարձ, ինչպես նաև զարգացնել լսելու, ինքնուրույն աշխատելու, քննադատաբար և ստեղծագործաբար մտածելու, ցածրաձայն խոսելու, աշխատանքի արդյունքը ներկայացնելու հմտություններ: Կրտսեր տարիքի աշակերտների հետ աշխատելիս խմբերին կարելի է տալ նույն առաջադրանքը կամ խնդիրը: Աշխատանքը վերջացնելուց հետո, համեմատելով մյուս խմբերի աշխատանքների հետ, աշակերտները հետադարձ կապ են ապահովում:

- Երեք բանալի և մեկ կողպեք:

Աշխատանքը կարելի է կատարել զույգերով կամ խմբով: Այս մեթոդը կարելի է կիրառել այնպիսի դասերի իմաստի ընկալման փուլում, որոնք բավականին ծավալուն են, նույն նյութին կամ երևույթին վերաբերող մի շարք բնորոշ

հատկանիշներ կան: Աշակերտներին առաջարկում ենք դասից դուրս գրել երեք նախադասություն (երեք բանալի), որը կարևոր է այդ նյութը յուրացնելու համար, բնագրից ընտրել մեկ նախադասություն (կողպեք), որը կամփոփի, կընդհանրացնի ասելիքը, միտքը, գաղափարը:

- Հինգրոպեանոց ազատ շարադրանք:

Հինգրոպեանոց ազատ շարադրանքի մեթոդը կարող է կիրառվել ինչպես դասի խթանման փուլում, այնպես էլ կշռադատման՝ ելնելով դասի նպատակից և թեմայից: Ընտրում ենք թեման և առաջարկում հինգ րոպեի ընթացքում ազատորեն շարադրել իրենց մտքերը, որից հետո դադարեցնում են աշխատանքը և ունկնդրում մի քանիսի գրած շարադրանքը:

- Շրջվիր դեպի զույգդ: Այս մեթոդը հնարավորություն է տալիս խուսափել դասաժամին ավելորդ աղմուկից, տեղաշարժից եւ խառնաշփոթից: Աշխատանքային դիրքը լինում է՝ «աչք աչքի», «երես երեսի»: Դեմ առ դեմ գտնվողները կարողանում են հեշտությամբ տեսնել եւ լսել մեկը մյուսին:Հաղորդակցումը կատարվում է խոսքով, աչքերով: Այստեղ կարեւոր է աշակերտներին դիմել պատահական ընտրությամբ՝ հնարավորություն տալով նրանց ներկայացնելու իրենց պատասխանները ամեն քննարկումից հետո:Նման անհատական պատասխանատվությունը ավելի զգոն է դարձնում զույգին, եւ աշակերտներն ավելի լրջությամբ են մոտենում առաջադրանքին եւ ստուգում միմյանց՝ համոզվելու համար, թե արդյո՞ք երկուսն էլ պատրաստ են պատասխանելու, թե ոչ:Այս մեթոդը ուսուցչին հնարավորություն է տալիս անարգել շրջել դասարանում, տալ անհատական հրահանգներ եւ առանձին մոտեցում ցուցաբերել խմբերին: Այս ժամանակ աշխատանքային աղմուկը կառավարելի է, իսկ աշխատանքային խմբերը չեն խանգարում իրար:

Համագործակցային ուսուցման կազմակերպումը

Կրթության ոլորտի աշխատողները ամենուրեք գիտակցում են, որ դասավանդման եւ ուսուցման հնացած ձեւերը այլեւս անկարող են ստեղծել ու զարգացնել գիտելիքներ ու հմտություններ, որոնք անհրաժեշտ են քաղաքացուն գիտելիքների տնտեսության մեջ բարեկեցիկ կյանքով ապրելու համար: Հետեւաբար, ինչպես Հայաստանում, այնպես էլ ամե- նուրեք, դպրոցում անհրաժեշտ են դասավանդման եւ ուսուցման այլընտրան- քային նոր մոտեցումները:

Համագործակցային ուսուցման, ուսումնառության արմատները հասնում են Ջոն Դյուիի աշխատություններին, որտեղ հեղինակը, ընդգծելով կրթության կարեւորությունը, այն դիտարկում է որպես ուսուցման այնպիսի մեխանիզմ, որը քաղաքացիներին սոցիալ-ժողովրդական հասարակարգում համագործակցու- թյան սկզբունքներով ապրելու ունակություններ է տալիս:

Դասավանդման խնդիրների լուծման նպատակով համագործակցային ուսուցումը ուսուցիչների կողմից փորձարկվող միջոցներից մեկն է:

Խիստ կարեւոր է իրարից տարբերել ավանդական խմբային աշխատանքը եւ համագործակցային ուսուցումը: Ուսուցիչներից շատերն են դասավանդման ընթացքում կիրառում խմբային աշխատանքը, սակայն քչերն ունեն ուսուցման գործընթացում համագործակցային ուսուցման հիմնական տարրերն ու մեթոդ- ները ինտեգրելու համար անհրաժեշտ վարպետություն: Հենց այդ պատճառով, համագործակցային ուսուցումը քիչ է կիրառվում դասարանում, եւ դպրոցում կիրառվող փոքր խմբերով աշխատանքներն ավելի շատ խմբային աշխատանքներ են, քան համագործակցային ուսուցում:

«Ուսուցումը համագործակցային կլինի այն դեպքում, երբ աշակերտները միասին, զույգերով կամ փոքր խմբերով աշխատում են մի ընդհանուր խնդիր լուծելու, մի ընդհանուր թեմա հետազոտելու կամ նոր միտք, նորարարություն իրականացնելու համար»

Համագործակցային ուսուցումը՝ որպես այլընտրանքային մանկավարժական մոտեցում, մեծ ճանաչում է ձեռք բերել բազմաթիվ երկրների ուսուցիչների եւ ուսուցիչների պատրաստում եւ վերապատրաստում իրականացնողների կողմից: Դրա լայն տարածմանը նպաստող գործոններից են՝ դասարաններում ուսուցումը սովորողի անհատական առանձնահատկություններին հարմարեցնելը,

բազմակողմանի կրթական նպատակներին միաժամանակ հասնելու հնարավորությունը, ուսուցման առանձնահատկություններին, ժամանակակից մոտեցումներին համահունչ լինելը: Համագործակցային ուսուցման տարրերն, ըստ Ջոնսոնների, հիմնականում հինգն են.

- դրական փոխկախվածություն,
- դեմ առ դեմ փոխազդեցություն,
- անհատական հաշվետվություն եւ պատասխանատվություն,
- միջանձնային կամ փոքր խմբերով աշխատանքի հմտություններ,
- խմբային գործընթացի մշակում:

Հետագայում այդ տարրերին ավելացվեց եւս մեկը: Պասի Սահլբերգը փոխներգործուն /ինտերակտիվ/ առաջադրանքը դիտարկում է որպես համագործակցային ուսուցման 6-րդ տարր:

«Խմբային աշխատանքի ամենագնահատելի հատկանիշը խմբի անդամների միջեւ համագործակցությունն է: Համագործակցության արդյունավետությունը կախված է մեթոդապես ճիշտ տարվող գործունեությունից: Ուսուցիչը պետք է հաշվի նստի աշակերտների ինքնուրույն կարծիքների, կայացրած որոշումների, միմյանց հետ ազատորեն հաղորդակցվելու իրավունքների հետ»:

Համագործակցային ուսուցման տարրերի կիրառումը նպաստում է դասարանում նոր՝ համագործակցային միջավայրի ձեւավորմանը, օգնում է ուսու ցչին հասկանալու էությունն ու պլանավորելու դասը, պայմաններ է ստեղծում ուսուցման արդյունավետության գնահատման եւ արժեւորման համար:

Ուրիշների հետ աշխատելու եւ համագործակցային ստեղծագործական աշխատանքից առավելագույնս օգուտ քաղելու էական պայմաններից մեկն ուրիշի տեղում իրեն պատկերացնելու կարողությունն է, քանի որ դիմացինի տեսակետի ըմբռնումն աշակերտներին հնարավորություն է տալիս ավելի հեշտությամբ հարմարվելու կյանքի պահանջներին:

Համագործակցային ուսուցման ընթացքում խմբի յուրաքանչյուր անդամ կամ ամբողջ դասարանն ակտիվորեն ներգրավված են ուսուցման մեջ, իսկ նոր գիտելիքը մշակվում ու յուրացվում է հենց աշակերտի միջոցով:

Համագործակցային ուսուցման ընթացքում կարեւորվում է ոչ միայն ակադեմիական գիտելիքների եւ հմտությունների ձեռքբերումը, այլեւ խմբային

գործընթացի մշակմամբ հմուտ համագործակցողներ եւ գիտելիքների ակտիվ կիրառողներ ձեւավորելը:

Համագործակցությունն ստեղծում է ինքնաճանաչման ավելի բարձր մակարդակ, քան կարող են ապահովել մրցակցային կամ անհատական ուսուցման եղանակները: Համագործակցային իրավիճակներում անհատները միտված են փոխներգործելու, նպաստելու միմյանց հաջողությանը, ձեւավորելու հետաքրքրությունների լայն շրջանակ եւ կազմելու միմյանց կարողությունների մասին իրական պատկերացումներ, հետեւաբար տալիս են ճշմարիտ հետադարձ կապ:

Ուսուցչի դերը համագործակցային ուսուցման մեջ

Ուսուցչի գործը հասարակության շրջանում ամենից կարեւորվող, ամենա մեծ հնարամտություն պահանջող, օրեցօր ավելի գնահատվող մասնագիտություններից է: Այսօր հաջողության հասնելու համար ուսուցիչներին հարկավոր են երեխաներին կառավարելու եւ օգնելու նոր եղանակներ, նաեւ՝ երեխաների ար դյունավետ ուսուցման համար անհրաժեշտ մոտեցումների խոր ընկալում:

Ուսուցումը սովորողի ներսում տեղի ունեցող բարդ գործընթաց է: Ուսուցիչն այն կարող է միայն ուղղորդել, ստեղծել դրա համար նպաստավոր միջա վայր, աջակցել եւ մտածելու հնարավորություն ընձեռել: Համագործակցային մե-թոդներն ակնկալում են ուսուցչի դերի փոփոխություն, եւ այդ դերը լի է մարտահրավերներով:

Համագործակցային ուսուցում կիրառող ուսուցիչը պետք է լինի համբերատար խմբի անդամներին ուղղորդելու համար: Խմբերին անհրաժեշտ է բավական ժամանակ միմյանց հետ ազատ եւ հարմարավետ զգալու համար:

Ինչպես ավանդական, այնպես էլ համագործակցային ուսուցման դեպքում հաջողության առանցքը ուսուցչի նախապատրաստությունն է: Ուսուցիչը պետք է պլանավորի ոչ միայն բովանդակության մոտեցումը, այլ նաեւ աշակերտների գործողությունները եւ գնահատումը:

Համագործակցային ուսուցման մեթոդներն անգլերենի դասավանդման ժամերին

Դասի կազմակերպման ժամանակ ուսուցչի հիմանական աշխատանքը կլինի բոլոր խմբերի աշխատանքների վերահսկումն ու ուղղորդումը: Ցանկացած դաս եւ դասարան եզակի է, ուստի ուսուցչի վարպետության ցուցանիշներից մեկը նպատակին համապատասխան մեթոդի ընտրությունն է:

Եթե աշակերտներին պարզապես բաժանենք խմբերի եւ առաջարկենք միասին աշխատել, ապա դա չի նշանակում, որ նրանց մղել ենք արդյունավետ համագործակցության: Ոչ բոլոր խմբային աշխատանքներն են, որ կարող են ապահովել համագործակցային ուսուցում: Շատ են պատահում դեպքեր, երբ ընդհանուր առաջադրանքը իրականացնելու ուղղությամբ խմբի ջանքերը արդյունք չեն ունենում: Առաջադրանքը, մեթոդը պլանավորվում եւ իրականացվում է այնպես, որ սովորողին մղի համագործակցության եւ նպաստի նրա ակտիվ մասնակցությանը ուսուցման պրոցեսին:

Համագործակցային ուսուցման ընթացքում շատ կարեւոր է խմբերի մեծությունը: Առավել արդյունավետ են համարվում 4-5 հոգուց բաղկացած խմբերը: Այդպիսի խմբերում աշակերտները առավել մեծ ակտիվություն դրսեւորելու հնարավորություն ունեն: Չորս հոգանոց խմբերում կարեւորվում է յուրաքանչյուր աշակերտի անհատական պատասխանատվությունը եւ միաժամանակ ձեւավորվում է կոլեկտիվ աշխատանքի մթնոլորտ: Խմբի մեծությունը կախված է դասի նպատակից եւ ընտրված մեթոդից: Փոքր խմբերով աշխատանքը էապես մեծացնում է աշակերտի ակտիվությունը դասապրոցեսում: Ակնհայտ է, որ հնարավոր չէ արդյունավետ սովորել միայն դիտողի, լսողի, պասիվ վիճակում գտնվելով: Աշակերտն ավելի լավ է սովորում, երբ ակտիվ մասնակցում է գործընթացին: Փոքր խմբերով ուսուցումը կարեւորվում է նաեւ այն առումով, որ դասարաններում աշակերտների

խտության մեծացման արդյունքում զգալիորեն դժվարանում է ուսուցման ֆրոնտալ անհատական հարցման ձեւերի կիրառումը: Երբ ուսուցիչն աշխատում է դասարան (մեծ) խմբի հետ, ապա աշակերտները արտահայտվելու, քննարկելու ավելի քիչ հնարավորություններ են ունենում: Փոքր խմբի պարագայում այդ հնարավորությունները շատ ավելի մեծ են: Փոքր խմբերով ուսուցումը ունի հետեւյալ նպատակները

- զարգացնում է խնդիրներ լուծելու կարողություն,
- ձեւավորում է հաղորդակցման հմտություն,
- աշակերտները սովորում են միմյանցից,
- զարգանում է աշակերտների պատասխանատվության զգացումը,
- միմյանց հաշվետու լինելու հատկությունը՝ խմբի ընդհանուր

հաջողությունն ապահովելու հարցում,

- խթանում է թիմային աշխատանքը,
- ապահով եւ նպաստավոր միջավայր է ստեղծում գիտելիքներն ու հմտությունները դրսեւորելու համար,
- քննարկումների միջոցով ամրապնդվում է աշակերտների համոզմունքները,
- ընձեռում է ակտիվ մասնակցություն եւ ինքնադրսեւորման հնարավորություն:

Այսօր հանրակրթական դպրոցների մեծ մասում դասարանների խտությունը անցնում է 20-25 (որոշ տեղերում՝ 30-34) : Ոչ բոլոր դպրոցներն ունեն համապատասխան կահավորում եւ պայմաններ: Դասարաններում չկան շարժական սեղաններ, խմբային աշխատանքի համար նախատեսված պարագաներ, կապի առկայություն, տեսացրիչ, էլեկտրոնային գրատախտակ եւ այլն:

Ուստի անգլերենի դասերին 16 աշակերտ ունեցող դասարաններում կիրառվել են համագործակցային երկու մեթոդ՝ «Խճանկար» և «Շրջագայություն պատկերասրահում» մեթոդները 7-րդ «Ա» և 7-րդ «Բ» զուգահեռ դասարաններում:

Ներկայացնենք թե ինչպես են ընթացել դասերը միևնույն թեմայի վերաբերյալ:

Ընտրված թեման է “Means of travelling” «Ճամփորդության միջոցները»:

7-րդ «Ա» կիսվող դասարանում (16 աշակերտ) դասն անցկացվել է «խճանկար» մեթոդով:

Դասի սկզբնական փուլում աշակերտները բաժանվեցին հենակետային 4 խմբերի՝ յուրաքանչյուր խմբում չորս աշակերտ: Աշակերտները խմբերի բաժանվեցին պահապնելով հավասարության սկզբունքը. յուրաքանչյուր խմբում ընդգրկված էր լեզվին լավ տիրապետող երկու աշակերտ և մի փոքր թերացող երկու աշակերտ: Կարելի է ասել խմբերում ուժերը հավասար էին բաշխված:

Խմբի յուրաքանչյուր անդամ դառնալով փորձագետ՝ ուսումնասիրեց դասի իրեն հանձնարարված հատվածը: Առաջին խմբին հանձնարարվեց ուսումնասիրել դասի ներածական հատվածը, որտեղ ներկայացված է ընդհանուր տեղեկություն ճամփորդության միջոցների մասին, դրանց առավելությունների, դժվարությունների, անհարմարությունների մասին:

Երկրորդ խմբին հանձնարարվեց ուսումնասիրել «Ճամփորդություն նավով» հատվածը: Երրորդ խմբին՝ «ճամփորդություն ինքնաթիռով», իսկ չորրորդ խմբին «Ճամփորդություն գնացքով» հատվածները:

Այնուհետև յուրաքանչյուր փորձագետ հենակետային խմբի մյուս անդամներին փորձեց սովորեցնել իր ենթաթեման: Այսպիսով՝ նյութն ուսումնասիրվեց հատվածաբար, ապա պատկերն ամբողջացավ, երբ միավորվեցին խմբային աշխատանքի արդյունքները:Սովորողները մեծ պատասխանատվություն էին կրում միմյանց ուսումնառության համար՝ հանդես գալով և՛ սովորողի, և՛ սովորեցնողի դերերում:

Ամփոփիչ փուլում համագործակցային խմբերը 2-3 րոպեի ընթացքում ամբողջ դասարանին ներկայացրին իրենց թեման՝ պատասխանելով նախապես ուսուցչի տված հարցին(Ո՞րն էր ամենակարևորը): Այս քայլը հնարավորություն տվեց միևնույն նյութն ամփոփել և գնահատել տարբեր տեսանկյուններից և մի քանի անգամ:

Ի սկզբանե մեթոդը նպատակ էր հետապնդում.

- Նպաստել նյութը տարբեր կողմերից ուսումնասիրելուն՝անդրադառնալով թեմային առնչվող տարբեր ոլորտներին:
- Ընկերների հետ համագործակցելով՝ օգնել գտնելու առաջադրված հարցի պատասխանը:
- Մշակել փորձագիտական կարողություններ՝ ըստ տրված նյութի ամբողջացնելու և հաղորդելու տեղեկատվությունը:
- Հնարավորություն ստեղծել միաժամանակ դառնալու և՛ սովորող և՛ սովորեցնող:
- Նոր նյութը յուրացնել արդեն դասարանում:

Երեխաների ակտիվությունը, ոգևորությունն ու համերաշխ «համագործակցելը» միմյանց հետ ապացույցն էին նրա, որ մեթոդն իսկապես արդարացված էր, տեղին և արդյունավետ:

Դասի վերջում, աշակերտներն «անկեղծանալով», նշեցին, որ դասն իրենց համար իսկապես հետաքրքիր էր այսպես սովորել և միմյանց սովորեցնել:

7-րդ «Բ» կիսվող դասարանում (դարձյալ 16 աշակերտ) դասն անցկացվել է «շրջագայություն պատկերասրահում» մեթոդով:Սա «Խճանկար» մեթոդի տարատեսակ է, որի նպատակն էր փոխանակել տեղեկություններ, մշակել գաղափարներ եւ կատարել անդրադարձ, ինչպես նաեւ զարգացնել լսելու, ինքնուրույն աշխատելու, քննադատաբար եւ ստեղծագործաբար մտածելու, ցածրաձայն խոսելու, աշխատանքի արդյունքը ներկայացնելու հմտություններ:

Ներկայացնենք դասի ընթացքը:

Նախ աշակերտները բաժանվեցին խմբերի դարձյալ հավասարության սկզբունքով:Մեթոդը կիրառվել է նույն թեմայի վերաբերյալ՝«Ճամփորդության միջոցները»: Ուսուցիչն ուսումնական նյութը բաժանեց 4 մասերի և յուրաքանչյուր խմբին տվեց դրանցից մեկը՝ ինքնուրույն ուսումնասիրելու:

Չորս հոգուց բաղկացած խմբերն աշխատեցին ուսումնական նյութի իրենց տրված մասի վրա և ստացված արդյունքները մշակեցին նկարի տեսքով:

Այնուհետև պատրաստի աշխատանքները փակցրեցին դասասենյակի պատերին՝ ստեղծելով «պատկերասրահ»:

Խմբերի ներսում աշակերտները հաշվում են մինչեւ 4-ը եւ կազմում չորս նոր խումբ՝ ըստ իրենց խմբի ներսում ունեցած համարների (դասարանի բոլոր «1» համարի աշակերտները՝ մեկ խումբ, «2»-ները՝ ուրիշ խումբ եւ այլն):

Այս նոր խմբերը շրջում են պատկերասրահում՝ կանգ առնելով յուրաքանչյուր ցուցանմուշի մոտ, եւ տվյալ խմբի այն անդամը, որը մասնակցել է այդ իսկ ցուցանմուշի ստեղծմանը՝ կատարելով գիդի դեր, մանրամասն ներկայացրեց իրենց աշխատանքը, պատասխանեց հարցերին եւ մասնակիցների առաջարկությունների համաձայն՝ կատարեց լրացումներ, ուղղումներ: Շրջագայությունն ավարտվեց, երբ բոլոր խմբերը, միեւնույն ուղղությամբ «սահելով» ցուցանմուշների մոտով, ծանոթացան բոլոր աշխատանքներին:

Պատկերասրահում շրջագայությունից հետո հիմնական խմբերն իրենց աշխատանքները նորից քննության ենթարկեցին՝ այս անգամ արդեն համեմատելով մյուս աշխատանքների հետ եւ վերլուծելով առաջացած հարցերը:

Դասի վերջում աշակերտները՝ չթաքցնելով իրենց ոգևորությունը, ցանկություն հայտնեցին հաճախակի կազմակերպել նմանատիպ շրջագայություններ:

Վերոնշյալ երկու մեթոդներն իսկապես արդյունավետ էին թեմայի ուսումնասիրման և յուրացման համար:

Նոր Հաճնի N1 հիմնական դպրոցում անցկացվել է հարցում ուսուցչական կոլեկտիվի շրջանում՝ պարզելու, թե որ համագործակցային մեթոդներն են առավել հաճախ օգտագործում, որոնք են համարում արդյունավետ, ինչ խնդիրների են բախվել:

Հարցման արդյունքները վերլուծելով՝ կցանկանայինք նշել, որ ուսուցիչների մոտ 79%-ը դասը վարում է՝ կիրառելով համագործակցային որևէ մեթոդ: Այն հարցին, թե համագործակցային որ մեթոդներն են հաճախ օգտագործում.

- խճանկար-34%
- շրջագայություն պատկերասրահում-13%
- երեք բանալի և մեկ կողպեք-39%
- հինգրոպեանոց ազատ շարադրանք-8%
- աշակերտների թիմային առաջադիմության մեթոդ-6%

Այն հարցին, թե ինչ խնդիրների են բախվել, կիրառելով որևէ համագործակցային մեթոդ, ուսուցիչները մեծամասամբ նշել են աղնուկը և վերաբաշխումը:

«Ո՞ր մեթոդներն եք համարում արդյունավետ» հարցին պատասխանելիս ուսուցիչները փաստեցին մի բան,որ համագործակցային ցանկացած մեթոդ կարելի է համարել արդյունավետ, եթե այն ընտրված է դասին համապատասխան և ուսուցիչը հմուտ է այն կիրառելու մեջ:
Դիտարկում Հարցաթերթիկային հարցում Մեթոդական գրականության վերլուծություն
10.08.2022-14.09.2022
7-րդ <<Ա>> դասարան-16 աշակերտ 7-րդ <<Բ>> դասարան-16 աշակերտ

Եզրակացություններ, առաջարկություններ (1-2 էջ)

Վերհանված արդյունքներ, եզրակացություններ,	Եզրակացություն «Ոչ մի հետաքրքիր նորույթ ի հայտ չի գալիս առանց համագործակցության»:

պատասխան հետազոտական հարցին	Ջեյմս Ուայթսոն Ուսուցչի արդյունավետ աշխատանքի նախապայմաններից մեկը ուսուցման բազմազան միջոցներին տիրապետելն է: Այս իմաստով ուսուցման նոր մեթոդների ու եղանակների իմացությունը շատ կարեւոր է: Համագործակցային ուսուցման ներդրումը Հայաստանում իր հետ բերեց մեծ առաջընթաց ուսուցման եւ ուսումնառության գործընթացում: Մանկավարժական նշանակությունից բացի, այն ունի նաեւ հասարակական գործառույթ: Հայաստանում, ինչպես ամբողջ աշխարհում, ակնհայտ է, որ մարդիկ կարիք ունեն աշխատելու խմբերով, ուստի համագործակցային բազմազան հմտություններ են անհրաժեշտ խմբային աշխատանքն արդյունավետ դարձնելու համար: Այսպիսով, հիմք ընդունելով հետազոտության ընթացքում կատարած մեր պնդումները՝ կատարենք մի քանի արձանագրումներ. ● Համագործակցային այս երկու մեթոդների կիրառումը նպաստեց դասարանում նոր՝ համագործակցային միջավայրի ձեւավորմանը, ● Փոքր խմբերով աշխատանքը էապես մեծացրեց աշակերտների ակտիվությունը դասապրոցեսում: ● Բարելավվեց խմբային աշխատանքը: ● Աշակերտները հնարավորություն ունեին սովորել միմյանցից: ● Խմբային աշխատանքը խթան հանդիսացավ զարգացնելու աշակերտների պատասխանատվության զգացումը:

- Ձեռք բերեցին միմյանց հաշվետու լինելու հատկությունը՝ խմբի ընդհանուր հաջողությունն ապահովելու հարցում:
- Ապահով եւ նպաստավոր միջավայր էր ստեղծված գիտելիքներն ու հմտությունները դրսեւորելու համար:
- Համագործակցային ուսուցման տարրերի կիրառումը օգնեց ուսուցչին հասկանալու համագործակցային ուսուցման էությունն ու պլանավորելու դասը:
- Համագործակցային ուսուցման տարրերի կիրառումը պայմաններ ստեղծեց ուսուցման արդյունավետության գնահատման, արժեւորման համար:
- Խմբային աշխատանքը թույլ տվեց ուսուցչուհուն բոլոր խմբերի աշխատանքները վերահսկել և ուղղորդել:

Առաջարկություններ

Ուսումնասիրության արդիականության հիման վրա հանդես գանք առաջարկություններով:

Հաշվի առնելով նոր ժամանակների մարտահրավերները, կրթական համակարգի պահանջներն ու սովորողների՝ ամենօրյա ռեժիմով փոփոխվող հետաքրքրություններն ու պահանջմունքները՝ կարծում ենք, որ ուսումնական գործընթացի արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ է՝

- Մշակել արդյունավետ ռազմավարություն համագործակցային միջավայր ստեղծելու համար:
- Անգլերենի դասի արդյունավետությունը բարձրացնելու համար հարկավոր է հնարավորինս շատ Խմբային աշխատանքներ կիրառել, որը, կարծում ենք, կարող է

	զարգացնել սովորողի մոտ կոլեկտիվ մտածողություն, ուստի խրախուսում ենք նմանօրինակ առաջադրանքների կատարումը: • Անգլերենի դասաժամին անընդհատ նպաստել, որ սովորողները գործեն ինքնուրույն, խնդիրների լուծման ժամանակ անկաշկանդ ինքնաարտահայտվեն: Կարծում ենք, որ սույն հետազոտության մեջ կատարած արձանագրումները մեծապես կօգնեն մեզ հետագա աշխատանքի ընթացքում:
Այլ տեղեկատվություն	

Օգտագործված գրականության ցանկ **(1-2** էջ**)**

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Արնաուդյան Ա., Գյուլբուդաղյան Ա., Խաչատրյան Ս., Խրիմյան Ս., Պետրոսյան Մ. Մասնագիտական զարգացման ձեռնարկ ուսուցիչների համար: Երեւան: Կրթության ազգային ինստիտուտի հրատարակչություն: 2004: 178 էջ:
2. Պատմություն եւ Հասարակագիտություն.Ուսուցիչների 5-օրյա վերապատրաստումների պլան եւ նյութեր (կրթակարգ, չափորոշիչներ,

առարկայական ծրագրեր, ուսուցման նյութեր եւ նոր մեթոդներ) Երեւան: Հրատարակչություն: 2007: 127 էջ:
3. Հովհանիսյան Ա., Հարությունյան Կ., Խրիմյան Ս., Խաչատրյան Ս., Բայաթյան Ն., Ալեքսանյան Լ., Պուրուկուրու Վ. Համագործակցային ուսուցում. Ձեռնարկ: Երեւան: «Անտարես»: 2006:122 էջ:
4. Վեսա Պուրուկուրու Համագործակցային ուսուցում. վերապատրաստողի ուղեցույց: Երեւան: «Անտարես»: 2006: 95 էջ:
5. Հովհաննիսյան Ն., Ղուկասյան Ա., Ալեքսանյան Հ. Համաշխարհային պատմություն: Հանրակրթական դպրոցի 9-րդ դասարանի դասագիրք: Մաս 1: Երեւան:« Էդիթ պրինտ»: 2019: 78 էջ:
6. https://library.fes.de/pdf-files/bueros/georgien/16023.pdf Ուսուցման արդյունավետ հնարներ,Երեւան, 2020:

Հավելվածներ

Հաշվետվության կցված նյութեր	Հարցաթերթիկ
• Հետազոտության գործիքներ (հարցաթերթիկներ կամ այլ) • Նկարներ • Արդյունքներ	1. Համգործակցային ի՞նչ մեթոդներ եք կիրառում: 2. Համագործակցային ո՞ր մեթոդներն եք առավել արդյունավետ համարում: 3. Ի՞նչ խնդիրների եք բախվել դասապրոցեսի ժամանակ՝ կիրառելով համագործակցային որևէ մեթոդ: